## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 17.06.2016թ.-ի N 52-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 29.06.2016թ. ժամը 12⁰⁰

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 17.06.2016թ.-ի N 52-Լ հրամանի հիման վրա «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ ԳԻԾ/ենթակայաններ ծրագրի շրջանակներում Ճոճկան և Դղմաշեն համայնքներում կառուցվող «Այրում» և «Դղմաշեն» ենթակայանների տարածքների հողի երկրաբանական ուսումնասիրության մատուցման ծառայության պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ «ԲԷՑ–ՊԸԾՁԲ-16/22»

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝

Կորյուն Մկրտչյան - Գլխավոր տնօրենի տեղակալ

Անդամներ՝

Լևոն Ջավադյան - Գլխավոր տնօրենի խորհրդական

Վահե Մարտիրոսյան - Ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ

Միշա Բաղրամյան - Իրավապայմանագրային բաժնի պետ

Արմենուհի Բարսեղյան - Վարկային ծրագրերի իրականացման N2 բաժնի պետ

Քարտուղար՝

Ռոմեն Ալբերտյան - գնումների համակարգող

### I. Հայտի բացման մասին

---------------------------------------------------------------------

(Կորյուն Մկրտչյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Գեոտարածքնախագիծ» ՍՊԸ-ն ՝ 29.06.2016թ, ժամը 11:30-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Կիևյան 14/3 , հեռ. 096 19 58 11
- «Գեոդիզայն» ՍՊԸ-ն ՝ 29.06.2016թ, ժամը 11:40-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Չեռնիշևսկու փող. 74 , հեռ. 093 96 01 01
- «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ն ՝ 29.06.2016թ, ժամը 11:50-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129 , հեռ. 01065 41 00

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը:

2.1 Մասնակիցների ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.3 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.4 Մասնակիցների գնային առաջարկներն են.

ՀՀ դրամ

| <<Գեոտարածքնախագիծ>> ՍՊԸ | <<Գեոդիզայն>> ՍՊԸ | <<Էներգացանցնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ |
|---|---|---|
| 8400000 | 8496000 | 7900000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.
3.1 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:
3.2 Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ին:
3.3 Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
3.4 Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Կորյուն Մկրտչյան

Լևոն Ջավադյան

Վահե Մարտիրոսյան

Միշա Բաղրամյան

Արմենուհի Բարսեղյան

Ռոմեն Ալբերտյան